№ 237 Դեկտեմբերի 19 (31) 1881 Դեկտեմբերի 19 (31) № 237

ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարվանը 6 ռուբլ։
Առանձին համարները 5 կոպէկով։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի
Тифлисъ. Редакція «Мшакъ»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերից)։

Այտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Ցայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Հայոց խնդիր։—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Նամակ Բագուից։ Ներքին լուրեր։—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Ֆրանսիա։ Անգլիա։ Իտալիա։ Արտաքին լուրեր։—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ։—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ։—ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ։ Դաւիթ բէկ։

ՀԱՅՈՑ ԽՆԴԻՐ

„Journal d'Orient" լրագրի № 50 մէջ տպվեցաւ Թիւրքաց Հայաստանի ազգահամարը, որից երևում է թէ քրիստոնեաները Թիւրքաց Հայաստանում աւելի բազմաթիւ են, քան թէ մահմեականները։ Այն հայոց վիլայէթներում, որոնց համար ինքնավարութիւն է պահանջվում, յայտնվում է որ հայերի և ասորիների ազգաբնակութիւնը միասին հասնում է 1,152,854 թւին։ Բայց որովհետև այդ ազգահամարը կատարվեցաւ հայոց պատրիարքի հրամանով, Թիւրքաց կառավարութիւնը իր կողմից հրամայել է նոր ազգահամար կատարել հայոց նահանգներում։

Վիէննայի ֆրանսիական թերթը հետաքրքիր մանրամասնութիւններ է հաղորդում թէ ինչպէս է կատարվում կառավարչական ազգահամարը։ Պաշտօնեան տեղացի մի մահմեականի և մի քրիստոնեայի ուղեկցութեամբ շրջում է քաղաքի կամ գիւղի մէջ և ներկայանալով իւրաքանչիւր տան դրան առջև հարցնում է դուռը բաց անողին թէ ինչքան բնակիչ ունի այդ տունը։ Կանայքը և աղջիկները չեն հաշվում, այդպիսով երկրի բնակիչների կէսը, ուրեմն, անտես է առնվում։ Բացի սրանից հայերը, որոնք ծանրաբեռնված են այլ և այլ հարկերով, դիտմամբ պակաս են ցոյց տալիս իրանց ազգակիցների թիւը, որպէս զի պակաս հարկ վճարեն կառավարութեանը։ Տէրութեան հաշվողները մոնելով մի հարուստի տուն, հրամայում են բերել իրանց համար մի ձոխ ճաշ, կաֆէ, ծխախոտ,—և այն ժամանակ տան բնակիչների հաշիւը կատարվում է աւելի էլ անհոգ կերպով։

Մահմեականները, ընդհակառակն, ենթարկված լինելով զինուորագրութեանը, չեն կարող ծածկել իրանց թիւը պաշտօնական հաշվողներից։

Ընթերցողները տեսնում են, ուրեմն, որքան թերութիւններ ունի Թիւրքաց կառավարչական ժողովրդագրութեան սիստեմը, և որքան կարելի է հաւատալ Թիւրքաց պաշտօնական ազգահամարին։

Բայց „Ժուրնալ դ'Օրիան" լրագրում տպված Հայաստանի ազգահամարը աւելի ճիշդ կարելի է համարել թէև այդ ազգահամարի մէջ ցոյց տուած հայերի թիւը կարելի է minimum համարել։ Զը պէտք է մոռանալ որքան արգելքների է հանդիպել հայոց պատրիարքը իր դիտաւորութիւնը իրագործելու ժամանակ։

Այդ ազգահամարից յայտնվում է որ հայերը Թիւրքաց Հայաստանում կազմում են ազգաբնակութեան մեծամասնութիւնը, այն է 1,152,854 հոգի, այն ինչ մահմեականները՝ Թիւրքերը, քիւրդերը և չերկեզները միասին, շատ շատ 900,000 հոգի։ Զը պէտք է մոռանալ որ մահմեականների այդ թիվ մէջ Թիւրքաց կառավարութիւնը հաշվում է և քիւրդերի այն թափառական ցեղերին, որոնք ամենևին Թիւրքահպատակ չեն, այլ պարսկահպատակ են և որոնք ամառը անցնում են Պարսկաստանից դէպի Թիւրքաց Հայաստանը։

Եւ չը նայելով այդ ճարտարախօս թուանշաններին, եւրոպական դիպլոմատիան դեռ ևս չէ համոզվում Թիւրքաց Հայաստանին ինքնավարութիւն տալու և այդ երկրի մէջ քրիստոնեայ նահանգապետ ու քրիստոնեաներից բաղկացած վարչութիւն նշանակելու անհրաժեշտութեան մէջ։ Վերջին լուրերին նայելով Թիւրքիան դարձեալ դիտաւորութիւն ունի նշանակել Հայաստանում մի մահմեական նահանգապետ։

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԲԱԳՈՒԻՑ

—

Դեկտեմբերի 4-ին

Անցեալ շաբաթ այստեղի հայ թատրոնասիրաց խումբը ներկայացրեց Սունդուկեանի «Քանդված Օջախ» պիէսան և «Անանուն կատակ» վոդէվիլը։ Առաջին պիէսան լաւ անցաւ։ Ներկայացման նպատակը բարեգործական էր, բայց հաշիւը դեռ ևս չէ տրված։

Մահմեականների մուհարրամի տօնին հայ կանայք էլ գնում են պարսից մզկիթը, նուիրում են փող ու շորեր և լաց են լինում, կուրծքին զարկելով։ Եթէ հայ լուսաւորչական հոգևորականներից լսէիք քարոզներ, կենդանի ջերմեռանդ խօսք, այդ տեսակ անճոռնութիւն չէր պատահի։

Երկու շաբաթ է որ ձիւնել էր Բագուի մէջ։ Բայց ձիւնը կրկին հալվել էր։ Իսկ այսօրվանից սկսվեց իսկական ցուրտը և կրկին ձիւն է գալիս։

Հաւատացնում են որ այստեղի նաֆթատէրերը սպասում են որ բոլոր ընկերները Ռուսաստանից վերադառնան, որպէս զի ձեռք տան մի ընկերութեան կազմակերպութեանը, որ պէտք է մրցէ Նոբէլի հետ։ Սրանց պարագլուխն է պ. Միրզոեվ։ Կը սպասենք։

Ցայտնի է որ չոգեկաթսան տաքացնելու համար այրում են փայտ, քարածուխ, և այլն։ Մի տաս տարի առաջ այստեղ պ. Լէնց հնարել է ֆարսունկա տված մեքենայ, որի երկու ծորակներ, որոնց միջից է գալիս մինով չոգին, իսկ միւսով նաֆթի մնացորդ և այդպէս թրջվելով բոցավառ-

ԴԱՒԻԹ ԲԷԿ

ՊԱՏՄԱԿԱՆ ՎԷՊ

(1722—1728)

—

ԺԹ.

Զը նայելով Զէվու բերդի երկաթ անցքերը փակված էին հայոց զօրքերով, բայց այդ անցքերից մուտք գործելը սարսափելի դժուարութիւններ ունէր։ Բաւական էր, որ Թուրքերը կանգնեցնէին իւրաքանչիւր անցքի վրա յիսուն հրացանաւորներ, այնուհետև ոչ մի հայ զինուոր չէր կարող մուտք գործել բերդի մէջ։ Այդ հասկանում էր բերդակալ խանը, և այդ էր նրա յամառութեան գլխաւոր պատճառը։ Նա անելանելի էր համարում, որ թշնամին կարողանար գրաւել իր անմատչելի ամրութիւնները։ Այդ հասկանում էր և բէկը, չէր ցանկանում իր կողմից մեծ կորուստով ձեռք բերել նրա ամրութիւնները։ Նա աշխատում էր իր զինուորների արիւնը փոխարինել պատերազմական խորամանկութիւններով։ Իսկ այդ խորամանկութիւնները արդէն գործ դրված էին։ Բայց ոչ խանը և ոչ նրա աւագանին չը գիտէին, որ թշնամին արդէն բերդի միջումն է, գործում է, որոգայթներ է լարում հէնց նրանց քնթի տակին...

Բոնակալը կարող է երկնել միայն հրէշաւոր մտքեր. ռազմագիտական նուրբ կանխատեսութիւնները նրան ծանօթ չեն։ Գլխատելով իր հայ բնակիչներին, և նրանց կառափները նետելով դէպի թշնամու բանակը,—դրանով խանը մտածում էր սարսափ ձգել բէկի վրա և նրան հեռացնել իր բերդի մօտից։ Խանի հրամանը արդէն յայտնի էր թէ բերդի թիւրք բնակիչներին և թէ նրա զինուորներին։ Վաղորդեան նամազը կատարելուց յետոյ պիտի սկսվէր կոտորածը։ Հայերի տները, կայքը, կանայքը, զաւակները արդէն հարմանցօրէն բաժանված էին իրանց դրացի մահմեականների մէջ։ Եւ այդ կարգադրութիւնները յայտնի էին իրանց՝ հայերին։

Այդ կարգադրութիւնների վրա ծիծաղում էր մի սարսափելի մարդ, ծիծաղում էր հսկայի և սատանայի ծիծաղով։ Նա գտնվում էր նոյն ժամում իւզբաշի Սարգսի տան սենեակներից մէկի մէջ, որը առանձնացած, բաժանված էր կանանց բնակարանից։

Իւզբաշի Սարգիսը մի սպիտակամօրուք ծերունի էր, խելացի, փորձված և բարեսիրտ։ Նա ծանօթ էր խանին որպէս հայերի ներկայացուցիչը, որպէս նրանց տանուտէրը։ Երբէք նրա տանից պակաս չէր լինում Աստուծոյ հիւրը, իսկ այս գիշեր ընդունել էր իր մօտ այն «սարսափելի մարդուն», որ վերևում յիշեցինք։—Դա տէր Աւետիքն էր, բէկի անգութ զօրապետներից մէկը։ Նրա շուրջը շարված էին մի քանի հոգի բերդի հայ բնակիչների երեսելիներից, ուշադրութեամբ լսում էին նրա խօսքերը։

Տանուտէրը, որպէս զի մահմեականների կասկածը չը յարուցանէ իր տան մէջ հաւաքված ժողովի վրա, առաջուց լուր էր տարածել, թէ զիտաւորութիւն ունի հայերից մի մեծ գումար հաւաքել, ներկայացնել խանին, և դրանով նրա բարկութիւնը մոռցել, և նրա հպատակ, հաւատարիմ հայերի կեանքը ազատել կոտորածից։ Այդ լուրը հասել էր խանի ականջին։ Նա իր մէջ նոյնպէս ծիծաղում էր հայերի միամտութեան վրա, սպասում էր ստանալ գումարը, յետոյ հրամայել, որ նրանց գլխատեն։

Բայց իւզբաշի Սարգսի տան խորհուրդը, փոխանակ «փիչքէշի» վրա մտածելու, զբաղված էր այլ պատրաստութիւններով։

Տէր Աւետիքը, որ բէկի կամաւորների թւում մտնելուց յետոյ զինուորական հագուստ էր կրում, և որը այդ բերդում մտաւ սափրիչի կերպարանքով, այժմ հագած ունէր քահանայի նուիրական զգեստը։ Երևի, ռամկի վրա աւելի ազդեցութիւն գործելու համար, պէտք էր այդ հագուստով ներկայանալ նրան։ Նա դարձաւ դէպի իր շուրջը նստողները, ասելով.

—Ձեզ պէտք է կոտորեն, անպատճառ պէտք է կոտորեն, այդ դուք ինքներդ գիտէք։ Ուրեմն ձեզ համար մի և նոյն է, թէ ինչ մահով կը մեռնէք։ Աւելի լաւ չէ՞, որ սուրը ձեռքում պաշտպանէք ձեր անձը, ձեր կնիկները, ձեր զաւակները ու տղամարդի պէս մեռնէք։ Բայց եթէ լսէք ինձ, ես կարող եմ հաւատացնել ձեզ, որ կենդանի կը մընաք։ Դուք կազատէք ձեր անձը ու բոլոր նրանց, որոնք սիրելի են ձեզ համար։ Ձեզ հարկաւոր է մի քանի ժամ կռուել միայն, և շուտով կը տեսնէք, բէկի զօրքերը ձեզ օգնութեան հասած։ Այնուհետև այն, որ մահմեականները վճռել են գործ դնել ձեզ վրա, մենք գործ կը դնենք նրանց վրա...

—Մենք պատրաստ ենք, ասաց նրանցից մէկը,—բայց դժուարութիւնը նրանումն է, որ զէնքեր չունենք, մեր զէնքերը խլեց խանը։

—Դուք ուժեղ ձեռքեր ունէք և այդ բաւական է, իսկ զէնքեր յետոյ կը տանք ձեզ, ասաց քահանան։—Հարկաւոր է սկզբում զինուորվել այն գործիքներով, ինչ որ կը գտնվի ձեր տներում. թող լինի դա կացին, ուրագ, մանդաղ, բահ, շամփուր, մահակ, վերջապէս հասարակ փայտի կտոր, մի և նոյն է։ Այդ զէնքերը ձեզ պէտք են միայն փողոցներում պաշտպանվելու համար, իսկ երբ կը հասնենք ամրոցին, այնտեղ կը փոխէք ձեր ունեցածը իսկական զէնքերով։

—Ի՞նչպէս, հարցրին նրանից։

—Ես հարկաւոր չեմ համարում ձեզ բացատրել, թէ ինչպէս կարող է յաջողվել այդ, բայց իբրև քահանայ, իբրև Աստուծոյ տաճարի պաշտօնեայ, հաւատացնում եմ ձեզ, որ ինքը մեր Տէր Յիսուս Քրիստոսը կօգնէ մեզ և թոյլ չի տայ, որ իր գառները մորթվեն մահմեականների ձեռքով։ Ձեզ հարկաւոր է միայն այնքան քաջութիւն ունենալ, և հասնել մինչև խանի ամրոցը։

—Բոլոր դժուարութիւնները մինչև այնտեղ ողջութեամբ հասնելն է, ասաց նստողներից մէկը։

—Ոչինչ դժուարութիւն չը կայ։ Ձեզ յայտնի է, որ մենք այդ մասին բոլոր կարգադրութիւնները արել ենք։ Ես ինքս իմ քաջ ընկերներիս հետ կառաջնորդենք ձեզ։ Դուք միայն այն ասեցէք, թէ քանի հոգի կարող էք պատրաստել։

—Աւելի քան հարիւր հոգի։

—Այդ բաւական է։ Ուրեմն պէտք չէ ժամանակ կորցնել. շուտով գնացէք, թող ձեզանից ամեն մէկը պատրաստէ իր մարդիկը։

Ծերունի Սարգիս իւզբաշին մինչև այժմ լուռ էր. երբ նկատեց, որ քահանայի խօսքերը բաւական ազդեցութիւն գործեցին, ինքն նոյնպէս աւելացրեց.

—Այդ մարդիկը, տէր հայր, անձնանուէր մարդիկ են, ես դրանց ճանաչում եմ, և՛ քաջ մարդիկ են։ Ինքս շատ անգամ ականատես եմ եղել դրանց քաջութիւններին։ Մինչև այսօր հայի ձեռքը կապված էր, այժմ, փառք Աստուծոյ, կապանքը քանդվեցաւ։ Պէտք է մենք էլ ցոյց տանք, որ մարդիկ ենք, անասուններ չենք, որ ամեն կերպ գործածեն մեզ։—Վեր կացէք, զաւակներս, դարձաւ նա դէպի նստողները,—գնացէք, ինչպէս տէր հայրը ասում է, պատրաստվեցէք։ Մեր փրկութիւնը մեր քաջութեան մէջն է։ Աստուած էլ չէ օգնում մարդուն, երբ նա ինքն իրան չէ աշխատում օգնել։ Գիտէք այն առածը, թէ կանգնած եզը ինչ օրին է հանում քնած եզան գլխին...

Բոլորը կանգնեցան ոտքի վրա։

Ծերունին այժմ դարձաւ դէպի տէր Աւետիքը.

—Դրանք կը գնան, կը պատրաստեն իրանց մարդիկը, բայց դուք, տէր հայր, առաջուց պէտք է յայտնէք դրանց, թէ որտեղ պիտի հաւաքվեն և երբ պէտք է յարձակում գործեն։

—Ի հարկէ, պէտք է յայտնեմ, խօսեց քահանան։—Ես իմ մարդիկների հետ կը սպասեմ ձեզ ածխավաճառների հրապարակի այն անկիւնում, որտեղից մի խուլ, նեղ փողոց տանում է դէպի խանի ամրոցը։ Դուք ամեն կողմից փոքրիկ խմբերով, առանց աղմուկ հանելու, կը հաւաքվեք այնտեղ։ Իսկ յարձակումը կը կատարենք ուղիղ այն ժամանակ, երբ խանի ամրոցից կը յայտնվեն հրդեհի բոցերը, և երբ մի ֆշանք կը բարձրանայ օդի մէջ։ Այդ երկուսը՝ ֆշանքը և հրդեհի բոցերը կը յայտնվեն մի և նոյն րոպէում։ Այդ երևոյթները պէտք է ընտրէք ձեզ որպէս առաջնորդ. չը մոռանաք։

Ծերունին վեր կացաւ բաց անելու սենեակի դռները, որտեղ նրանք նստած էին։ Տէր Աւետիքը կրկին դարձաւ դէպի իր աջակիցները այդ խօսքերով.

—Ես ձեզանից, զաւակներս, ոչ խօսք, ոչ երդում և ոչ մի այլ ուխտ չեմ պահանջում, որով-

վում է։ Նրանից յետոյ պ. Կարապետեան աւելի կատարելագործված ֆարասնկա է հնարում, որ և ընդունված է արդէն չոգեկառքերը և չոգեկաթսաները տաքացնելու. դա մինչև այժմ եղածներից իր յարմարութեամբ գերազանցում է։ Բացի Կարապետեանի կատարելագործվածից, չվերացի Գոնդէր նոյնպէս հնարեց մի այլ տեսակը, որ նոյնպէս շատ յարմար է գտնված։ Թող գործարանատէրերը ուշադրութիւն դարձնեն երկու վերջինների վրա։

Ալ. Աբելեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Ցիշեցնում ենք հայ հասարակութեանը որ վաղը, կիրակի օր, ժամը 11-ին առաւօտեան, լինելու է Արծրունու թատրոնում «Հայոց Բարեգործական Ընկերութեան» ընդհանուր ժողովը։

—

Մեզ խնդրում են յայտնել որ հետևեալ անձինք նուիրել են հետևեալ գումարները յօգուտ «Հայոց Բարեգործական» ընկերութեան։ Վարդուհի Դաւթեան Անանեան և Ալէքսանդր Ստեփանեան Անանեան 1,000 ռուբլ, Յովհաննէս Ալէքսեան Զիթախեան 300 ռ., Սօփիա Սողոմոնեան Զիթախեան 300 ռ., Մարիամ Յովհաննիսեան Զիթախեան 300 ռ., Աննա Յովհաննիսեան Զիթախեան 300 ռ., Դարիա Ալէքսանդրեան Մանթաշեան 300 ռ., Ալէքսանդր Յովհաննիսեան Մանթաշեան 300 ռ., Աննա Ալէքսանդրեան Մանթաշեան 300 ռ., Մարիա Տէր-Ասատուրեան և Դիմիտրի Տէր-Ասատուրեան 600 ռ., Թադուհի Մելիք-Ազարեանց և Ալէքսանդր Մելիք-Ազարեանց 600 ռ., Յովհաննէս Լմինեան 300 ռ., Վարվարա Բարսեղեան Թամամշեան 600 ռ., Գէորգ Թամամշեան 300 ռ., Բարսեղ Թամամշեան 300 ռ., Կատարինէ Թամամշեան 300 ռ., Քրիստափոր Թայիրեան 300 ռ., Յուլիանէ Թայիրեան 300 ռ.։ Մենք այս անգամ տպում ենք այս նուիրատուների ցուցակը, բայց մշտապէս տպել մեր լրագրի էջերում յօգուտ «Բարեգործական» ընկերութեան հաւաքվող փողերը չենք կարող, եթէ ոչ լրագրի մէջ տեղ չի մնայ ուրիշ յօդուածների համար։ Մենք շատ անգամ ասել ենք որ կարող ենք տպել միմիայն այն նուիրատուների ցուցակները, որոնց փողերը մեր խմբագրութեանն են յանձնվում։ Իսկ եթէ «Բարեգործական» ընկերութեան խորհուրդը կամենում է, մենք կարող ենք շարունակել նրա նուիրատուների ցուցակները տպել մեր լրագրի յայտարարութիւնների բաժնում։

—

ԲԱԳՈՒԻՑ մեզ գրում են. «Ձեր թղթակիցները նկարագրում են ինչպէս գործարանատէրերը հարստահարում են մշակներին, բայց ոչ ոք չէ գրել հոկտեմբերի 9-ին պ. Քալանթարեանի տակառագործարանում պատահած հրդեհի մասին, որտեղ այրվեցին 4 հոգի երիտասարդ մշակներից, որոնցից երկուսը մոխիր դարձան, իսկ երկուսը բաւական վնասվեցան։»

—

Դերասան պ. Սաֆրազեան, ինչպէս մեզ գրում են, հասաւ Բաքու և մտադիր է այդտեղ երկու ամիս մնալ, հայերին ներկայացումներ տալու համար։

—

ՄՕՍԿՎԱՅԻՑ մեզ գրում են։ «Ձեր լրագրի առաջնորդող յօդուածները «Եւրօպա և Հայաստան» և «Հայոց օրդանները» մեծ համակրութեամբ կարդացվեցան այստեղի մտածող շրջաններում։ Գուցէ կաջողվի այստեղ իրագործել մի տեսակ հանդանակութիւն յօգուտ Փարիզի «Union Republicaine» և Լոնդոնի «Արևելեան լրագրի»։»

—

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻՑ մեզ շնորհակալութիւն են յայտնում «Մշակի» № 214 և 216 առաջնորդող յօդուածների համար։

—

ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻՑ մեզ գրում են, որ Գէորգեան ճեմարանի վեց հաղարանոց տեսուչ պ. Նահապետեան քանի մի ժամանակ սրանից առաջ աքսորել է ճեմարանից մի աշակերտին, որի յանցանքը միայն այն էր, որ յիշեալ աշակերտը արձակուրդ առնելով իր հայրենիքը, Ախալցխա գնալու, վերադարձին մի քանի օրով ուշացել էր ներկայանալ ճեմարանը։

—

Մեզ գրում են Վաղարշապատից, որ ճեմարանի մէջ կրօնագիտութիւնը երկրորդական տեղն է բռնում։ Հինգերորդ և վեցերորդ դասատներում կրօնը ամենևին դաս չէ տրվում։

—

ԵՐԵՒԱՆԻՑ պ. Աշօտ Տէր-Վարդանեան խնդրում է մեզ տպել հետևեալը։ «Մի քանի բաժանորդներ ճանապարհ ընկնելով դէպի Թիֆլիս, խոստացել են անձամբ վճարել խմբագրութեանդ «Մշակի» բաժանորդագրի իրանց ապառիկները։ Իսկ 1880 թվի բաժանորդներից՝ Գրիգոր Ռեվազանից, Գրիգոր Եղիազարեանից և Ֆարամազ Մելիք-Ալլահվերդեանից ես երբէք փողեր չեմ ստացել։»

—

Բաղուից մեզ գրում են որ այս տարի Բաղուի հայ-բողոքականներից շատերը դիտաւորութիւն ունեն գրվել «Մշակին»։

—

Մեզ գրում են Երևանից հետևեալը։ «Հոկտեմբերի վերջերին երկու բաղիչեցի վաճառականներ սպանվել են Ավաջուղի և Կարանլի մէջ։ Նրանցից տարել են 2000 օսմանեան ոսկի։ Նրանց ազգականները եթէ սպանողների ետևից ընկնեն, կողոպտած ոսկիները յետ կը ստանան և մարդասպանները կը պատժվեն։ Սպանողները յայտնի են, նոյնպէս յայտնի է թէ ինչպէս նրանք իրանց զոհերին խաբէութեամբ հեռացրին կարավանից, ինչ կարավանի մէջ են եղել,—բոլոր այդ մանրամասնութիւնները յայտնի են շատերին Ավաջուղի բնակիչներին։ Սպանվածների ազգականներին մեծ օգնութիւն կարող է տալ Կարանլի Հուսէյն աղան, որ մի արդարադատ և արդարասէր քիւրդ է։»

—

Ստացանք ԱԼԷՔՍԱՆԴՐԱՊՕԼԻՑ «Ժուրնալ դ'Օրիանի» համար 15 ռուբլ բաժանորդագրի հետևեալ անձերից. Սահակ Առաքելեանց, Ա. Ափրիկեանց, Պ. Բէպուրեան, Ն. Կարապետեան, Ս. Պալասանեանց, Ի. Խաչատուրեանց, Մ. Մուշեղեանց և Հ. Շահէեանց։ Առաջվայ 524 ռուբլ դումարի հետ կանի 539 ռուբլ։

—

Բաղուից մեզ գրում են։ «Շուտով այստեղ լինելու է սիրողների մի ներկայացումն, պ. Սաֆրազեանի խմբի մասնակցութեամբ։ Կը խաղան «Շուշանիկ» ողբերգութիւնը։ Ներկայացումը կը լինի յօգուտ արտասահմանում մի թղթակից պահելուն։» Այդ նպատակով մեր թղթակիցը ունի արդէն ժողոված 16 ռուբլ։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՖՐԱՆՍԻԱ

—

Պարլամենտական պարապմունքների շրջանը Ֆրանսիայի մէջ վերջացրած է հէնց այն ժամանակ, երբ արմատական կուսակցութեան անդամները մտադիր էին պարլամենտական ընդհանուր վիճաբանութիւններ ըսկսել Բուստանի դատաստանական գործի վերաբերութեամբ։ Ընդդիմադրական պատգամաւորները որոշեցին հարց բարձրացնել դիպլոմատիական գործիչների դրութեան մասին արտասահմանում։ Նրանք կամենում էին առաջարկել պատգամաւորների ժողովին քննել այդ մարդկերանց գործունէութիւնը վերջին տարիների ընթացքում, որպէս զի ճշդութեամբ որոշվի արտասահմանում գործող ֆրանսիական դիպլոմատիայի երկրորդական գործիչների պատասխանատուութեան չափը։ Արմատականների լրագրիները այն կարծիքի են, որ դատաւորների արդարացնող վճիռը Բուշֆօրի գործի վերաբերութեամբ ակներև բողոք է կառավարութեան քաղաքականութեան դէմ Տունիսի մէջ։ Նրանց կարծիքով նախկին մինիստրները առանց պարլամենտի համաձայնութեան մի վտանգաւոր ձեռնարկութիւն են սկսել։ „Rappel“ լրագիրը, որ առաջ Գամբետայի կուսակիցների կողմն էր հակված, նորից թշնամական դիրք բռնեց մինիստրութեան վերաբերութեամբ։ Պատգամաւոր Լոկրուա յայտնում է այդ լրագրի մէջ, որ մինիստրութեանը երեք շաբաթ ժամանակա-

---

հետև, հաստատած եմ, որ ձեր ընտանիքի և պատուի պաշտպանութիւնը պահանջում է կատարել այն, ինչ որ ձեզ պատուիրեցի։ Հիմայ գնացէք, զաւակներս, Տէր ընդ ձեզ։ Մի մոռացէք ածխավաճառների հրապարակը և մոքներումդ պահեցէք ձեզ յայտնած նշանները՝— հրդեհը և ֆշանքը։ Դարձեալ ասում եմ ձեզ՝ աշխատեցէք աղմուկ չը բարձրացնել, աշխատեցէք, ողջան կարելի է, ձեր հագուստով նմանվել Թուրքերին։

Նրանցից մէկը ասաց.

—Ձեր օծեալ աչով երդվում ենք, տէր հայր, որ կը կատարենք ձեր բոլոր խրատները, և քանի որ մեր բերանում շունչ կայ, թոյլ չենք տայ, որ մեր աչքերի առջև մեր կնիկները, մեր զաւակները յափշտակեն, և մեր ղլուխները Թեղանոթի փտակի տեղ գործ ածեն։

—Օրհնեալ լինիք, զաւակներս, մեր Տէր Յիսուս Քրիստոսին եմ յանձնում ձեզ. գնացէք, զաւակներս. մեր սուրբ Գրիգոր լուսաւորիչ պապը թող ձեզ ուժ և զօրութիւն շնորհեցէ։

Նրանք մօտեցան մէկ-մէկ համբուրեցին քահանայի աջը և հեռացան։

Այդ միջոցին ծերունի Սարգիսն էլ վեր առաց իր մահակը, որ գաւազանի տեղ էր գործ ածում, կրթնեցաւ նրա վրա, դողդողալով պատրաստվում էր դուրս գալ սենեակից։

—Դուք ո՞ւր էք գնում, Սարգիս-ապէր, հարցրեց քահանան, զարմացական ժպիտով նայելով նրա վրա։

—Գնում եմ, ասաց նա մի առանձին զգացված եղանակով.—գնում եմ տեսնեմ ջահիլները ինչ են չինում...

—Մի այսպիսի վտանգաւոր գիշերում ձեր դուրս գալը լաւ չէ, Սարգիս-ապէր, ասաց նրան քահանան։

—Օրհնած, ինչով պէտք է վատ լինի, այստեղ ինչ էլ որ ապրում եմ, այդ էլ աւելորդ է. իմ ոսկորները վաղուց պէտք է փթած լինէին։

Նա չը սպասեց քահանայի հետևեալ խօսքերին, օրօրվելով, դուրս եկաւ սենեակից, որ տեսնէ, թէ ջահիլները ինչ են չինում։ Զառամեալ սրտի մէջ եռ էր գալիս երիտասարդական աշխոյժը. ցանկանում էր, եթէ իր բազուկներով չէ կարող օգնել գործին, գոնէ իր խրախոյսներով քաջալերէ կըռուողներին։ Նա կանչել տուեց ծառային, որ առաջնորդէ իրան. ծառան պիտէր Նրա սովորութիւնները։ Գիշերները ծերունու աչքերը լաւ չէին տեսնում. ծառան բռնեց Նրա ձեռքից, սկսեց մանածել մթին փողոցների մէջ, անդադար զգուշացնելով. «այստեղ մի փոս կայ, այստեղ մի քար կայ» և այլն։

Տէր Աւետիքը մնաց սենեակում միայնակ։ Նավեր կացաւ, իր քահանայական զգեստը հանեց, մի կողմ ձգեց, ասելով. «Էլ ինձ պէտք չէք», յետոյ սկսեց հագնել իր աշխարհականի հագուստը և կապեց զէնքերը։

Այդ միշտ տխուր, միշտ տրտում մարդը ուրախանալ չը գիտէր. նա առհասարակ գտնվում էր մի տեսակ մռայլ տրամադրութեան մէջ, կարծես թէ, նրան մի բան պակաս էր, կամ մի բան կորցրել էր։ Իսկ այս գիշեր նրա խիստ դէմքի վրա երևում էր մի անսովոր ուրախութիւն, որ շատ նման էր դևերի ուրախութեանը, երբ նրանք պատրաստվում են կատարել մի սարսափելի արհաւիրք, մի հրէշաւոր գործ։

Նա մօտեցաւ նեղ լուսամուտին, սկսեց ականջ դնել փողոցից լսվող աղաղակներին։ Ամբոխի խռովութիւնը դեռ դադարած չէր։

—Ո՞ւր մնացին այդ դահնուկները, չեն երևում, ասաց իր մտքում փոքր ինչ զայրացած կերպով։ Նա սովորութիւն ունէր դէպի իրանից մանկահասակները վերաբերվել այդ խօսքերով։

Վերջապէս յայտնվեցան Ստեփաննոս իշխանը և Մելիք-Փարսադանի որդի Բալի զօրավարը։ Քահանան կարճ կերպով պատմեց նրանց, թէ ինչ վախճան ունեցաւ իր խորհուրդը տեղային հայոց երևելիների հետ, և վերջացրեց իր պատմութիւնը այդ խօսքերով.

—Չը գիտեմ, ողջան յոյս կարելի է դնել դրանց վրա։

—Նրանց վրա յոյս կարելի է դնել, ասաց Մելիք-Փարսադանեանը.—«հեղ ընկած կատուն առիւծ է դառնում։» Անձնապաշտպանութեան բընազդումը կը ստիպէ նրանց կատարել իրանց խոստմունքը։

—Կը տեսնենք, ասաց քահանան փոքր ինչ երկբայական եղանակով։—Դուք ինձ այն ասեցէք, ականը պատրաստ է։

—Բոլորովին, պատասխանեց Շահումեանը։—Ուղիղ բացվում է դէպի Բայինդուր իշխանի և Մելիք-Փարսադանի բանակը։

—Եւ նրա գոյութեան մասին ոչ ոք տեղեկութիւն չունի։

—Ոչ ոք, բացի Աստուծուց։

—Իսկ Խորէն հայր սուրբը գնացել է։

—Գնացել է, իր սիրելի Սառայի հետ։

—Սառան մեր ամենի սէրին արժանի է, պատասխանեց քահանան կշտամբելով Մելիք-Փարսադանեանի հեգնութիւնը։—Սառան աւելի գործեց, քան թէ մենք ամենքս։

—Իսկ Փարիշանը։

—Փարիշանը նոյնպէս, պատասխանեց քահանան մի առանձին ակնածութեամբ։—Եթէ ես նրան տեսնէի, փոխանակ թոյլ տալու, որ նա իմ աչքը համբուրէ, ես առաջինը կը լինէի, որ նրա ձեռքը կը համբուրէի։ Ամեն մի կին պաշտելի է դառնում, երբ բացի կին լինելուց, մարդ է դառնում, այսինքն կատարում է մարդկութեան համար մի լաւ բան։ Այն բոլոր կանայքը, որոնց այսօր ոտնում է մեր եկեղեցին, կանացիութեան նեղ սահմանից դուրս եկած, ընդհանուր մարդկային բարութեան համար գործողներն են եղել։ Մեզ համար մի և նոյն է, թէ ինչ տեսակ անցեալ են ունեցել Սառան կամ Փարիշանը։ Թող նրանց անցեալը մռայլոտ լինի, բայց բարի գործը մինչ այն աստիճան պայծառացնում է նրանց ներկան, որ հին մռայլը կորչում է, անհետանում է նոր լուսաւորութեան մէջ։ Մեր Տէր Յիսուս Քրիստոսը Մարիամ մաղթաղինացիների ձեռքով ուսելի շատ գործեց, քան թէ Պողոսի և Պետրոսի ձեռքով։ Աստուած հին մեղքը չէ յիշում, երբ մարդ ներկայանում է նրան որ և է առաքինութեամբ։

Քահանայի խօսքերը բաւական ամաչեցրին Մելիք-Փարսադանեանին, որ նա այնպէս անպատկառ կերպով վերաբերվեցաւ դէպի Սառան և դէպի Փարիշանը։ Տէր Աւետիքը նոյնքան խիստ էր իր քարոզների մէջ, ողջան խիստ էր կռիվի դաշտում։ Երիտասարդ Բալին ոչ մի խօսք չը գտաւ նրան պատասխանելու և լուռ կացաւ։ Իսկ իշխան Շահումեանը յայտնեց, որ ժամանակ է գընալու։

Երեքը միասին դուրս եկան իպրաչի Սարգսի տանից. փողոցների խառնաշփոթ աղմուկը փոքր ինչ դադարած էր։ Խիստ հաղիւ պատահում էին զայրացած խմբեր, որոնք աղաղակներ բարձրացնելով անցնում էին։ Բայց պէտք չէ մոռանալ, որ մահմեդական ամբոխը այդ ժամանակ քնած էր։ Բերդի մեծ մէչիտը լիքն էր աղօթող բազմութիւնով։ Ամենքը արտասուքը աչքերում Աստուծոյ օգնութիւն էին խնդրում։ Մօլլաների գլխաւորը, խանից առանձին հրահանգներ ստանալով, կանգնած էր ամբիոնի վրա, քարոզում էր, յորդորում էր, գրգռում էր բազմութեան կատաղի բարկութիւնը «անհաւատների» դէմ։ Այս գիշեր նա ներկայացել էր ժողովրդին բոլորովին այլ կերպարանքով. գլխի սպիտակ չալմայի փոխարէն կրում էր երկաթէ սաղաւարտ, քարոզչի գաւազանի փոխարէն կրում էր երկայն նիզակ, իսկ կրօնաւորի բարեպաշտական զգեստի փոխարէն հագած ունէր զրահ։ Նա ասում էր, որ դատաստանի օրում բոլորը սև երեսներով, կը յայտնվեն Մուհամմէդի առեանում, եթէ թոյլ կը տան դաւաղներին ոտք կոխել այն երկրի վրա, որ պատկանում է խալամի հաւատացեալներին։ Իսկ ով որ կը կռվի, արիւն կը թափի, և մեր սահմաններից կը հալածէ դաւաղներին, նա դատաստանի օրում կը ներկայանայ Մուհամմէդի առեանում պարզ և պայծառ երեսով։ Նրա ճակատի վրա կը փայլի նրա քաջութեան աստղը։ Եւ մարգարէների մեծը այդ նշանով կը ճանաչէ իր քաջերին և կը վարձատրէ Աստուծոյ դրախտի ամենագեղեցիկ փառքերով։

Մեր երեք հերոսները, անցնելով մէչիտի դռնից, լսեցին այդ խօսքերը։ Տէր Աւետիքը ծիծաղելով ասաց.

—Լաւ երազ է, եթէ ի բարին կատարվի...

(Կը շարունակվի)

միջոց է տրվում, որպէս զի նա վերջնակա-նապէս յայտնէ իր նախագիծը: Գամբետտա պէտք է ցոյց տայ, թէ նա ինքը ինչ է: Նոյն ձևով խօսում են և ֆրանսիական այլ առաջնակարգ լրագիրներ: Շատերը յուսա-հատված են համարձակ վերանորոգութիւն-ների և օրինագիծների բացակայութեան պատճառով, իսկ ֆրանսիական հասարա-կութիւնը այժմեան մինիստրութեան կազմ-վելուց առաջ ունէր այդպիսի յոյսեր: Օրէնս-դրական շրջանը, որ այժմ փակված է, շա-րունակվեց ամբողջ եօթ շաբաթ և ոչ մի նշանաւոր առաջարկութիւն չարվեցաւ պատ-գամաւորների ժողովին կառավարութեան կողմից: Կառավարութեան այդպիսի անգոր-ծունէութիւնը սաստիկ վշտացնում է վերա-նորոգական գործունէութեան կողմնակից-ներին: „République Française“ լրագիրը ներկայացնում մի առանձին յօդուածով ապա-ցուցանում է այդ յոյսերի և ենթադրու-թիւնների անհիմն լինելը: Այդ լրագրի կարծիքով, չափազանց օտարոտի կը լիներ պահանջել, որ ներքին նշանաւոր հարցերի վերաբերութեամբ օրէնքները մէկը միւսի ետևից արագութեամբ հեղինակվէին, ա-ռանց հիմնաւոր պատրաստութեան միայն այն նպատակով, որ ընթերցող հասարակու-թիւնը հետաքրքիր նորութիւններ ունենայ: „République Française“ հաւատացնում է, որ իսկական վերանորոգութիւնները կը քննվեն յունվարի սկզբին, երբ սենատի մի մասը արդէն վերանորոգված կը լինի և երբ կառավարութիւնը նշանաւոր մեծամասնու-թիւն կունենայ ոչ թէ միայն պատգամա-ւորների ժողովի մէջ, այլ և սենատի մէջ: Ֆրանսիացիները սոսկված են չափաւորել իրանց անհամբերութիւնը և մի փոքր էր սպասել համոզվելու համար, որ Ֆրանսիայի նման երկրի կեանքը վերանորոգելու համար մինիստրութեան փոխելը բաւական չէ:

ԱՆԳԼԻԱ

Կալուածական միութեան ցոյցերը Իրլան-դիայի մէջ ոչ թէ միայն չէն դադարում, այլ ընդհակառակը աւելի ընդարձակ չափեր են ստանում: Փակված միութեան տպված յայտնութիւնները և ազդարարութիւնները տարածվում են ժողովրդի մէջ միութեան քարտուղար Էգօնի ձեռքով: Այդպիսի ազ-դարարութիւններից մէկի մէջ, որ ստորա-գրված է Պարնելից, Դեվիտից, Սեկսաօնից, Դիլլօնից և ուրիշ առաջնորդներից, ի միջի այլոց ասված է հետևեալը. „Ով որ կը դա-ւաճանէ Իրլանդիային փորձութեան օրե-րում, նա կը ստանայ իր արժանի պատիժը: Ցիշեցէք, որ դուք սուրը դորձ էք պաշ-պանում մի խումբ մարդկերանց դէմ, որոնց կարելի է դժոխքի ծնունդներ անուանել ո-րովհետև նրանք դարերի ընթացքում ձեզ կողոպտում էին, կերակրվում էին ձեր արիւ-նով և քրտինքով, տարածում էին իրանց շուրջը հիւանդութիւններ, աղքատութիւն, տանջանք և սով: Դա մի պատերազմ է ի-րաւունքի՝ բռնութեան դէմ, արդարութեան և ազատութեան՝ կամայականութեան և սարկութեան դէմ, մարդասիրութեան և քրիստոնէութեան՝ կոպիտ և անբարոյական եսականութեան դէմ: Պաշտպանվեցէք հա-մառութեամբ և հաստատամտութեամբ, եթէ մինչև անգամ ձեր առաջ փայլեն 60,000 սուրներ և գնդակները ձեզ վրա կարկուտի պէս թափվեն: Աստուած ձեզ հետ է և թշնամին անկարող է ձեզ յաղ-թել: Էլի մի պատերազմ և դուք յաղթող կը հանդիսանաք: Մի վճարէք կալուածա-կան տուրքը, մի տաք ձեր հունձերը, մի զիջանէք ձեր հողերը և դուք նոր տարուն ազատ ժողովուրդ կը լինէք: Մի ուրիշ ազ-դարարութիւն ուղղած է Իրլանդիայի տղա-մարդիկներին, որոնք հրաւիրվում են հնա-զանդվել կալուածական միութեան նշանա-բաններին, գործել համաձայնութեամբ, հաստատամտութեամբ և քաջութեամբ և չը վախենալ զոհերութիւններից: Ազդա-րարութիւնը խորհուրդ է տալիս յուսալ Ամերիկայի վրա իբրև դրամի և համակրու-թեան աղբիւրի վրա և վերջանում է այն համոզմունքով, որ Իրլանդիայի մէջ այլ ևս չեն մնայ լենդլօրդեր:

ԻՏԱԼԻԱ

Իտալական սենատի նիստի ժամանակ ա-ռաջին մինիստր Դեպրետիս եռանդով բողո-քեց այն մեղադրանքների դէմ, իբր թէ իտալական մինիստրները ստիպված էին Վիէննա գնալ իրանց կամքի հակառակ: „Մենք գնացինք Վիէննա, ասաց մինիստրը, որովհետև մեր պարտականութիւնն էինք հա-մարում այդ բանն անել երօպական խա-ղաղութիւնը պահպանելու համար, որ Ի-տալիային այժմ աւելի հարկաւոր է, քան երբ և իցէ:“ Մինիստրը ցաւակցութիւն յայտնեց, որ իտալական քաղաքական մար-դիկ այդպիսի կասկածներ և մեղադրանք են յայտնում, որոնք արձագանք են գտնում արտասահման: Անցնելով ընտրողական վե-րանորոգութեան օրինագծի պաշտպանու-թեանը, Դեպրետիս յիշեցրեց սենատին, թէ ինչ ճանապարհով է հասունացել այդ հար-ցը և պնդում էր, թէ անհրաժեշտ է նրան լուծել այժմ, երբ սենատը յարմար միջոց ունի: Արդարութեան մինիստր Ցանարդելի հերքում էր այն կարծիքը, թէ նոր օրէնքի հետևանքը ընտրողական ընդհանուր իրա-ւունք կը լինի և խորհուրդ տուեց սենա-տին ընդունել օրինագիծը առանց նրան ուղղելու:

Պրագայի արքեպիսկոպոսը մի ուղերձ ներ-կայացրեց պապին, որին վերջինը տուեց հետևեալ պատասխանը. „Մեր մէջ համա-ձայնութեան անհրաժեշտութիւնը այժմ ա-ւելի զգալի է, քան թէ երբ և իցէ: Քրիս-տոնէութեան շահերի պաշտպանները երբէք չեն կատարել այդպիսի դժուար պատերազմ և երբէք չեն զգացել այդպիսի ծանր տան-ջանքները, ինչպէս ներկայումս: Պատերազմը եկեղեցու և Աստուծու դէմ երբէք այդքան բացարձակ և անամոթութեամբ չէ կատար-վել ինչպէս այժմ: Աղաքելական աթոռի վրա ամեն կողմից սրբապիղծ հարուածներ են թափվում: Մի և նոյն ժամանակ նոյն իսկ ներկայումս այդ Աստուածային հիմնարկու-թիւնը կարող էր յուսոյ և փրկութեան աղ-բիւր լինել: Եթէ մի բան ընդունակ է սան-ձահարել մարդկանց անչափ ագահութիւնը և ամբոխի անսանձ կուսութիւնը, դա մի-այն կաթոլիկ եկեղեցին է իր առաքինու-թեամբ, վարդապետութեամբ և կարգապա-հութեամբ: Աւելի մեծ դատապարտութեան արժան է այն մարդկերանց անմտութիւնը և յանդգնութիւնը, որոնք յարձակվում են պապականութեան վրա, որ պէտք է պաշ-պանված լինի գոնեա ի պատիւ այն բարե-բարութիւնների, որոնցով նրան պարտական են ազգութիւնները: Աստուած տայ, որ իտա-լական ժողովուրդը ամենից առաջ հասկա-նայ, որ ամեն բան, ինչ որ նա կը գործէ պապականութեան իրաւունքները և ազա-տութիւնը պաշտպանելու համար, ոչ թէ միայն փառաւոր չի ներկայացնի Իտալիայի համար, այլ ընդհակառակը նրա փառքի և զարգացման աղբիւր կը դառնայ:“

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Անգլիական «Daily News» լրագիրը լսել է որ Ահմեդ-Վէֆիկ փաշան կը նշանակվի Հայաստանի նահանգապետ: Ասում են որ Անգլիան չատ գոհ է որ այդ մահմեդականը նշանակվում է Հայաստանի նահանգապետ: Այդ լուրը, ի հարկէ, դեռ ստուգութեան կարօտ է:

—«Indépendance Belge» լրագիրը հաղորդում է, որ Պէկինից մի հեռագիր է ստացված, որի մէջ ասված է, թէ սարսափելի ուրագանի պատճառով, ծովը հեղեղեց Ցալի քաղաքը, ուր խեղդվեցան մինչև 3000 մարդիկ:

—Բերլինի պաշտօնական «Post» լրագիրը գրում է դեկտեմբերի 6-ից, պապի խնդրի մասին, անուանելով նրան բօսնիս-գերմանական, հետևեալը: Շատ նշանաւոր է, որ պապը, մինչև անգամ արտաքուստ չէր մեռում Իտալիայի հպատակ. ուրեմն նրան հարկաւոր է վերադարձնել իր աշ-խարհական իշխանութիւնը և ապահովացնել իր անձեռնմխութիւնը: Ինչ որ Գերմանիային է վե-րաբերում, նա, պաշտպանելով պապին, կը կորի կղերականների և պարտիկուլիարիստների մէջ ու-նեցած իր կապը:

—Աւստրիական լրագիրները հաղորդում են դեկտեմբերի 7-ից հետևեալը: Այստեղ արգելվեցաւ մէկ բրոշիւր, որը հասարակութեան խորհուրդ էր տալիս չը գնել սերբիական օբլիգացիաները և ոչը, բացի դրանից, սաստիկ յարձակվում էր աստ-ուրական պետական կրեդիտի վրա, այդ պատճա-ռով էլ նա ենթարկվեցաւ քրէական հալածանքի:

—Սպանիական լրագիրները հաղորդում են, որ արդարադատութեան մինիստր երկար խօսակցու-թիւն ունէր պապի դեսպանի հետ Սանտանդերում նրա արտասահման անէծքի առիթով այդ քաղա-քում հրատարակվող երեք լրագիրների խմբագրու-թիւնների դէմ: Պապի դեսպանը յայտնեց, որ ինքն պատրաստ է զիջումներ անել:

—«Ind. Belge» լրագրին Մադրիդից հաղորդում են դեկտեմբերի 6-ից հետևեալը: Այստեղ լուրեր են տարածված մինիստրական կրիզիսի մասին. այդ լուրերը չեն դադարում, չը նայելով պաշտօ-նական հերքումներին: Արդարադատութեան և զինուորական մինիստրների դրութիւնը սաստիկ խախտուտ դարձաւ մեծամասնութեան աչքին, որը ձգտում է երդուեալների դատարան հիմնել, քա-ղաքական ամնստիա և պարտաւորեցուցիչ զինուորագրութիւն մտցնել:

—Մադրիդի լրագիրները հաղորդում են, որ Սանտանդերում անբաւականութիւնը մեծանում է. եպիսկոպոսը յամառում է չադատել անէծքից ա-զատամիտ լրագիրներին: Ցօլէդեան, ոէվիլեան և բարցելօնեան արքեպիսկոպոսները խորհուրդ են տալիս հաւատացեալներին չը կարդալ այդ լրա-գիրները:

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

«Daily News» լրագրի թղթակիցը պատմում է հետևեալ ծարտոի դէպքը: Այսօր, նոյեմբերի 30-ին (դեկտեմբերի 12-ին), ասում է նա, ես անցնում էի դեռ ես ծիվող Բինգ թատրոնի մօտով: Մէկ սպիտակամօրուք ծերունի աշխատում էր անցնել ամբոխի միջով. նա բարձրաձայն աղա-ղակում էր: Ես ականջ դրեցի: «Ես գիտէի, որ իմ անէծքը կը կատարվի» անդադար կրկնում էր նա: Ես մօտեցայ նրան և հարցրի նրա խօսքերի նշանակութիւնը: «Միթէ դուք չը գիտէք, պա-տասխանեց նա, որ հէնց այս տեղի վրա 1848 թվին հրացանի բռնվեցան տասը յեղափոխական-ներ: Նրանց մէջ իմ որդին էր գտնվում: Ես կանգ-նած էի հէնց այս տեղի վրա. այն ժամանակ այն-տեղ, ուր դուք ծիվող աւերակներն էք տեսնում, մէկ փոս էր գտնվում, իսկ նրանից յետոյ հողա-յին պատնէշ: Այս պատնէշին այն ժամանակ Գը-լասիս անուն էին տալիս, այժմ այդտեղ Բինգ-չտրասէ փողոցն է անցնում: Այն ժամանակ չատե-րին էին հրացանի բռնում Վիէննայում: Ես կանգ-նած էի և նայում էի թէ ինչպէս էին սպանում իմ որդուն և նրա ընկերներին և անիծեցի այս տեղը: Ես գիտէի, որ չեմ մեռնի, մինչև իմ ա-նէծքս չը կատարվի:» Ես ստուգեցի նրա պատ-մածի ճշմարտութիւնը: Ցայտնվեցաւ, որ ուղիղ հէնց այդ տեղի վրա սպանում էին չատերին: Երբ Բինգ-թատրոնը սկսեցին շինել, նախապա-շարված մարդիկ դիները չարժում էին և ասում էին, որ այդ բանը բարի վախճան չի ունենայ: Եւ այժմս էլ ամբողջ մամուլը ընդդէմ է այն բանին, որ այդտեղի վրա մի որ և իցէ շինութիւն կա-ռուցվի:

* * *

«Nord. Allg. Zeitung» լրագիրը հաղորդում է, որ այն սև երդիկները, որոնք 1879—79 թվին ձմեռը Բերլինում մի քանի ներկայացումներ տուին նեգրի-տանեան համալսարան հիմնելու համար փողոց հաւաքելու դիտաւորութեամբ, հատան իրանց նպա-տակին և մինչև անդամ կարողացան կատարել իրանց դիտաւորութիւնը. այժմ արդէն մէկ գեղե-ցիկ տուն է կառուցված, որի շինութիւնը նստեց 600,000 ֆրանկ:

* * *

Ինչպէս յայտնի է, գերմանական կայսրուհին պրէմիա նշանակեց մէկ լաւ հեղինակութեան հա-մար, որի մէջ նկարագրված կը լինի դիֆտերիտի թէ բնաւորութիւնը և թէ նախազգուշական մի-ջոցները այդ ցաւի դէմ: Այս, ասում է «Nor. Allg. Zeitung» լրագիրը, հասարակական առողջապահու-թեան շահերի տեսակէտից անհրաժեշտ է որքան կարելի է շուտով մշակել նախազգուշացնող մի-ջոցներ, որովհետև այդտեղ դիֆտերիտից հիւան-դացողների և մահվան դէպքերի թիւը, Բերլինի ստատիստիքական բիւրօի տեղեկութիւններին նա-յելով, սաստիկ արագութեամբ մեծանում է: Ցայտնվում է, որ Բերլինում 1877—1880 թվին այդ սարսափելի ցաւից մեռել են մօտ 5,314 մա-նուկներ մինչև տասը տարեկան հասակը: Աւելի ևս մեծ է մեռնողների թիւը ներկայ տարվայ վեր-ջին 11 ամիսներում. այն է մեռել են ընդամենը 1,376 մանուկներ: Մի և նոյնը կարելի է ասել և Համբուրգի, Մինխէնի, Դրէզդէնի, Բրէսլաուի, Կենիգսբէրգի, Շտէտինի և Դանցիգի վերաբերու-թեամբ:

* * *

Պէկինի լրագիրը հաղորդում է, որ Լօնդօնի նախկին չինական դեսպան Կուօ-Սանգ-Ցաէի աղ-ջիկը՝ Ցաղօ-Կուօ-Զի, որի ամուսինը նորերումս վատնդաւոր կերպով հիւանդացաւ, դէպի իր ամու-սինը ունեցած սիրոյ զգացմունքից դրդված դուրս կարեց իր ձեռքից մսի կտոր և դցեց նրան գազի մէջ, որ նա շուտով առողջանայ: Բայց երբ հիւանդը այնու-ամենայնիւ մեռաւ, այն ժամանակ նա (կինը) սովամահ եղաւ:

* * *

Ցայտնի գերմանացի ճանապարհորդ մայոր Ֆօն-Մէյսօվ, ներքին Աֆրիկայում իր վերջին ճա-նապարհորդութիւնից վերադառնալով Բերլին, բե-րեց իրան հետ երեք նեգր երեխաներ, որոնց օրի-նաւոր կերպով դատարակում է: Նա դիտաւո-րութիւն ունի այդ տղաներին թողնել Բերլինում ու-սում ստանալու համար մինչև իր հետևեալ ճանա-պարհորդութիւնը: Այն ժամանակ նա իր հետ կը վերցնի այդ նեգրներին և կը թողնի իրանց հայրե-նիքում, որ նրանք կարողանան գերմանական քա-ղաքակրթութիւնը տարածել այնտեղ: Այժմս այդ տղաները անային թեթև գործեր են կատարում, ո-րոնց մէջ չատ ընդունակ գտնվեցան: Բացի դրանից նրանք սովորում են գերմանական լեզուն, որ կարողանան ուսումնարան մտնել:

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Կ. ՊՈԼԻՍ, 16 դեկտեմբերի: Ռուսաց „Ազով“ շոգենաւը ծովը խորասուզեց Ֆրան-սիական „Province“ փոստային շոգենաւը: Ճանապարհորդները ազատված են, բեռը կորաւ:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 16 դեկտեմբերի: „Новости“ լրագիրը հաղորդում է. Ինտենդանտ Մակշէեվի գործի մէջ յանցաւորներ 14 են, պաշտպաններն են Պլեվակո, Ուրուսօվ, Պա-սօվեր, Ալէքսանդրով, Սօկոլով և Պուշկին: Գործը կը քննվի յունվարին Ս. Պետերբուր-գի զինուորական դատարանի մէջ:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 17 դեկտեմբերի: Պետա-կան բանկի 5% տոմսակը առաջին շրջանի արժէ 93 ր. 50 կ., երկրորդ 90 ր. 50 կ., երրորդ 91 ր., չորրորդ 90 ր. 25 կ., հինգե-րորդ 90 ր. 25 կ., ներքին 5% առաջին փոխառութեան տոմսակը արժէ 223 ր. 75 կ., երկրորդ 215 ր. 25 կ., արևելեան առաջին փոխառութեան տոմսակը արժէ 90 ր. 12 կ., երկրորդ 89 ր. 75½ կ., երրորդ 89 ր. 75½ կ., ոսկի 7 ր. 85 կ.: Բօրսայի տրա-մադրութիւնը հանդիստ է:

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԲԱԹՈՒՄԻ
ԿՕՄԻՍԻՕՆԷՐ
ԱՐՇԱԿ ԾԱՏՈՒՐԵԱՆՑ

Ընդունում է ամեն տեսակ պատուէրներ, յանձնարարութիւններ և ապահովարանք։

14—20

ՊՕԼՈՒՍՈՒԿԻ

ՈՍԿԷ ԻՐԵՂԷՆՆԵՐԻ և ԺԱՄԱՑՈՒՑՑՆԵՐԻ Սահմանով մեծ քանակութեամբ, գրպանի և պատի զանազան ժամացոյցներ և ոսկէ իրեղէններ արտասահմանում և Ս. Պետերբուրգում շինված, նոյնպէս և գործիքներ ժամացոյցների և ոսկէ իրեղէնների արհեստաւորների համար, պատիւ ունեմ յայտնել պ. պ. գնողներին և արհեստաւորներին, որ ինձ մօտ բոլոր ապրանքները ծախվում են ամենաէժան գներով։ Առևտուրը կատարվում է Արծրունու գալերէյում № 185։ Օտարաքաղաքացիք պէտք է դիմեն Թիֆլիս ՊՕԼՈՒՍՈՒԿԻՆ։ 1—3 (2).

ԲԺՇԿԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԴՈԿՏՕՐ ՏԷՐ-ԶԱՆԵԱՆՑ *ընդունում է հիւանդներին ամեն օր առաւօտեան 10—12 ժամը։ Սօլօլակ, Սադովայա փողոց տուն Տուտունովի։*

1—5

Տափի Թաղի ՍՈՒՐԲ ԳԷՈՐԳԱՑ *եկեղեցւոյ ժամաւորների մանաժողովը, որ ընտրուած էր եկեղեցական գեմոյ կապալաւ տալու խնդիրը քննելու համար, պատիւ ունի ընդսմին խոնարհաբար խնդրել մեծ. ժողովրդականներին շնորհ բերել կիրակի ամսոյս 20-ին, երեկոյեան 6 ժամին, վիճակաւոր կոնսիստորիան մանաժողովի զեկուցումը լսելու համար։*

1—1

Բ. ՇԱՀՎԵՐԴԵԱՆԻ
ԼՐԱԳՐԱԿԱՆ
ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԵԱՆ ԳՐԱՍԵՆԱԿՈՒՄ

Բաժանորդագրվում են Զմիւռնիայի „ԱՐԵՒԵԼԵԱՆ ՄԱՄՈՒԼ“ քաղաքական և գրականական հայ ամսագրին. 12 տետրակների գինը 10 ռուբլի է։

Հասցէն. Тифлисъ, Агентство В. Шавердова.

1—10

Զայի և գինու ստաքաններ

144 Արծրունու գալերէա 144
ամենաէժան պահեստ
մարէլի և հայելիների։

Ծախվում են մեծ և փոքր քանակութեամբ։

Ամենամեծ ընտրութիւն գինեստաքանների։

ՐԷՍՏՕՐԱՆԸ
ԱՐԾՐՈՒՆՈՒ ԹԱՏՐՕՆԻ ՄՕՏ

Մի նոր տիրոջ ձեռքն անցնելով, ստացել է այժմ մի բոլորովին այլ և գեղեցիկ տեսք, ունի ընտիր ճաշեր և ընթրիքներ, նոյնպէս և լաւ խմիչքներ։ Գները շատ էժան են

17—20

Въ Редакціи газеты
«МШАКЪ»
Продается
„ЭКОНОМИЧЕСКОЕ ПОЛОЖЕНІЕ ТУРЕЦКИХЪ АРМЯНЪ.“
Д. Григорія АРЦРУНИ.
Брошюра напечатана въ Москвѣ.
Цѣна 25 коп.

ԾԱԽՎՈՒՄ ԵՆ 25% ԷԺԱՆ *քան թէ ուրիշ տեղ. Թէյ, կակաո, ՇՕԿՕԼԱԴ, բիսկվիտներ, մուրաբաներ, բրինձ, ամաններ, բաժակներ, բօկալներ, Թէյամաններ, սուրճոկներ,* ՄԱՏՈՒՑԱՐԱՆՆԵՐ, *երես լուանալու ամաններ,* ԿՈՂՊԷՔՆԵՐ, ԶԳԵՍՏԱԿԱԽՆԵՐ, *գդալներ, դանակներ,* ԳՐԻՉՆԵՐ, *թուղթ, ծրարներ, տետրակներ, մատիտներ,* ՀՐԱՑԱՆՆԵՐ, ՐԷՎՕԼՎԵՐՆԵՐ, *մէջքակապներ, կլէօնկա,* ԹԱՄՔԵՐ, *սանձեր, ուլթներ,* ՄԱՀՃԱԿԱԼՆԵՐ, *երեսբրիչներ, թաշկինակներ, կանանց գուլբաներ, մարդկերանց գուլբաներ, տուալետի սապոն, հոտաւէտ ջրեր, շերբեթ, ցիտրան մագնեզիա, խինայի գինի, պօրտվէյն, խերես, կօնիակ և 1,000 այլ առարկաներ։* **ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ ՄԷՋ։ ՆՈՅՆ ՏԵՂԸ** *վաճառականներին* **ՄԵԾ** *քանակութեամբ ծախվում է* **ԹԷՅ.** *պուդերով 40, 46, 52, 58, ր., իսկ ֆունտերով 1 ր. 1 ր. 10 կ., 1 ր. 20 կ., 1 ր. 40 կ., 1 ր. 60 կ. և 1 ր. 80 կ., իսկ ամենաբարձր Թէյը ֆունտը 2 ր. քաշը* ԱՌԱՆՑ ԹՂԹԻ։

ՀՐԱՑԱՆՆԵՐ 20—60 *ր. և* ՉՕԿ-ԲՕՐ (chokl bore) George Dau-*ի գործարանից 120 ր., րէվոլվերներ 4—34 ր.,* ԲՈՒԼԴՕԳ (bull dog) 11—20 *ր., կանանց թամբեր 65 ր., շեֆիլդի դանակներ 3 ր. 50 կ. դիւժինը, ալբոմներ կիսագնով, ֆիլարաներ և այլն։ Ամենամեծ պահեստ հրացանների և րէվոլվերների Թիֆլիսում։*

73—100

Վաճառվում են 15,000 ամաններ առաջին տեսակի 15 կ. հատը, 12,000 խրուստալի բաժակներ 25 կ. հատը, 10,000 բօկալ և բաժակներ 10 կ. հատը, 10,000 մատուցարաններ և կողպէքներ 15 կ. հատը, 10,000 ասեղ 8—40 կ. հարիւրը, 10,000 պինալներ 5 կ., 5,000 շիշ պօրտ-վէյն և խերես 1 ր. հատը, 2,000 արշին կլէօնկա 60 կ.—2 ր. արշինը, 2,000 դիւժին մատիտներ և գրչակոթեր 8 կ. դիւժինը, 2,000 ֆ. հնդկական բրինձ 7, 8 և 10 կ. ֆունտը, 1000 ֆունտ լէպէշկա 50 կ. ֆունտը, 600 անգլիական րէվոլվերներ 4—34 ր. հատը, 300 անգլիական հրացաններ 20—100 ր. հատը, դրապ, տրիկօ, ալբոմներ, ձմեռվայ պալտօներ, գլխարկներ, վարտիկներ, հագուստ կէս գնով։ Ծախվում է **ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ** *մէջ։ Նոյն տեղը ծախվում է ծովային* **ԽՈՏ** *պուդը 2 ր. 50 կ.։*

25—60

ՎԻԷՆՆԱՅԻ ՄԵԲԵԼ, *(աթոռներ և բազկաթոռներ) ծախվում են մեծ քանակութեամբ և մանր, միջի փողոցում կաթոլիկաց փողոցի անկիւնում* ՄԻՔԱՅԷԼ ՏԷՐ-ՆԻԿՈՂՈՍԵԱՆԻ *պահեստում։*

Օտարաքաղաքացիք կարող են դիմել այս հասցէով. Тифлисъ, Михаилу Н. Теръ-Никогосову.

121—150

Վերականգնեցնող **ՄԱԿ-ՄԱՍՏԵՐ,** *մազերը ամրացնող և նրանց* **ԲՆԱԿԱՆ ԳՈՅՆԸ** *վերադարձնող։ Գինը 2 ր. շիշը,* **ՓՈՍՏԱՅՈՎ** *ուղարկված 2 ր. 49 կոպ.* **ԱՆԳԼԻԱԿԱՆ** *խանութի մէջ*

Մի և նոյն տեղը **ԽԻՆԱՅԻ ԻՒՂ,** *մազերը ամրացնելու համար, 1 ր. ամանը վրձին գլխաբաւի դէմ,* **ՏՈՒԱԼԷՏԻ ՍԱՊՕՆ** *և հոտաւէտ ջրեր և այլն։*

59—100

ՇԻՐԱԿ՝ *տեղագրութիւն պատկերազարդ, հաւաքեց Հ. Ղ. Ալիշան*

Մանրամասն և հարազատ հետազօտութիւն Շիրակ գաւառի, գեղեցիկ քարտէզով և չքեղ պատկերներով զարդարուած։—Հ. Ալիշանի այս վերջին աշխատասիրութիւնը ամենապատուական և առաջնակարգ տեղ պէտք է բռնէ ոչ միայն նոյն հեղինակի մինչև այժմ լոյս տեսած ընտիր երկասիրութիւնների մէջ, այլ և հայկական համայն գրականութեան ծանրակշիռ զարդերից մինը պիտի համարուի։ Ամենայն հայ, որի համար թանգ է իր ազգի անցած գնացած փառքերի նշխարների հետազօտութիւնն ու մշակութիւնը, ագահութեամբ պիտի ձեռք առնէ և իր գրաւեղանի անհրաժեշտ սեպհականութիւններից առաջինը պիտի դարձնէ սրան։ Գինն է 10 ր. ճանապարհի ծախքը 50 կոպ.։

ԳՐԻՉ ԵՒ ՍՈՒՐ՝ *պ. Մինաս Չերազի վերջին գրուածքի առաջին հատորն է, որի մէջ յօրինողը շարունակում է այն բանակռիւը գրաբառը պաշտպանողների դէմ, որի սկիզբը ծանօթ է մեզ իւր դատարակութիւն անունով գրքից։ Բացի լեզուագիտական հակիրճ և ազդու յօդուածներից, այս գրքոյկի մէջ ընթերցողը կը գտնէ տեղեկութիւններ նաև ուրիշ մի քանի հետաքրքիր հարցերի վերաբերութեամբ։ Գինն է մէկ բուբլի. ճանապարհի ծախքը 10 կ.։*

վաճառվում են

ԿԵՆՏՐՕՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՅՈՒՄ։

ՆՈՐ ԴՈՒՐՍ ԵԿԱԾ ԳՐՔԵՐ

Որոնք վաճառվում են ԶԱՔԱՐԻԱ ԳՐԻԳՈՐԵԱՆՑԻ „ԿՈՎԿԱՍԵԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՅՈՒՄ

1	Բագրատունի՝ Տաճն պատգամք. գինն է	25 կ.
2	Աղայեանց՝ Անահիտ, հին զրոյց.	50 „
3	Թղուկ, Թարգ. Տէր-Միքայէլեանցի.	30 „
4	Աղքատ մանուկ կամ բարոյական վէպ.	20 „
5	Խաթաբալա Սունդուկեանցի.	50 „
6	Զորս մանրավէպ Տէր-Աւետիսեանի.	20 „
7	Հայերէն լաւոս երեխաների համար.	50 „
8	Տէր-Ակորեանց՝ Հայաստանի աշխարհագրութիւն.	60 „
9	Կոստանեանց՝ Գրաբառ բայերի խոնարհումը.	25 „
10	Թագուորեան՝ Փոքր լեզուագիտական հետազօտութեան	50 „

Նոր ստացել է Բոստոնի Տէր-Աբրահամեանցի 1882 թուի **ՕՐԱՑՈՅՑ,** *գինն է 15 կոպ. գումարով առնողներին զիջումն կը լինի։*

„ԿՐԿՆԱԿԻ ԻՏԱԼԱԿԱՆ ՀԱՇԻԱՊԱՀՈՒԹԻՒՆ“ ԲՈՒԻԳԱԼՏԵՐԻԱՅ“

Ամենանոր և գործնական ձևի, բացարձակ կանոններով և բացատրութեամբ, որ ամենահեշտ կերպով կարող է սովորացնել հաշուապահութիւնը այն անձանց, որոնք ցանկանում են սովորել կամ ունենալ այդպիսի հաշիւներ, շուտով կը մտնի մամուլի տակ. գիրքը կը բաղկանայ մօտ 400 երեսից. և մաքուր տպագրութեամբ. դրա հետ միասին կը լինի և մի փոքրիկ վիպասանութիւն „Գող“ վերնագրով և „Իմ երգերը“ յաւելուածով. ցանկացողները թիֆլիսում կարող են գրուել „Կենտրօնական“ և „Զաքարիայ Գրիգորեանցի գրավաճառանոցներում և Թադէոս Տէր-Միքայէլեանցի մօտ. Բաղու Բասիյսկիյ մագազինում, ինձ մօտ և „Մարդ ընկ“ գրադարանում. գաւառական քաղաքներում այն անձանց մօտ, որոնք բարեհաճել են այդ մասին ստորագրութեան թերթ ընդունել։

Երկուսի արժէքն է միասին 2 ր. 50 կ. տպագրութիւնից յետոյ 3 ր.։ Բաժանորդների անունները և ազգանունները կը տպագրուեն գրքի վերջում։

Հրատարակիչ Աբել Դ. Ապրեսեանց

ՎԵՐԱՐԿՈՒՆԵՐ 4 *ր.,* ԾՐԾՈՂՆԵՐ 1 *ր* *ծալվող աթոռներ 1 ր. 50 կ.,* ՓԱՑՏ-ԱԹՈՌ 4 *ր.,* ԲԱԶԿԱԹՈՌ-ՄԱՀՃԱԿԱԼ 10 *ռուբլի և աւելի, Թէյի բաժակներ 25 և 30 կ., մի աման քորոցներ 50 կ., պատեալ ծխողների համար 60 կ. ֆունտը, անգլիական վանաներ և այլն ծախվում են* **ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ ՄԷՋ։**

10,000 *զոյգ գուլբաներ 25 կ.—ից զոյգը,* 10,000 *զոյգ կանանց* ԳՈՒԼԲԱՆՆԵՐ 30 *կ.—1 ր., 7,000 մատուցարաններ 5 կ.—5 ր., 1,000* ՄԱՀՃԱԿԱԼՆԵՐ 5 *ր.—35 ր., 400 արշին բօմբազէյ. 1 ր.—1 ր. 30 կ., պաբուսինա 40 կ.—1 ր., 300 հատ րէվոլվեր 4 ր.—35 ր., 700 ալբոմ* ԿԻՍԱԳՆՈՎ, 10,000 *ֆունտ Թէյ* ԹԷՑԱՄԱՆՈՎ 1 *ր. 65 կ.։ երկաթէ գրիչներ իւրաքանչիւր ձեռքի համար։ Ծախվում են* **ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ** *մէջ։*

61—100

Դուրս եկաւ մամուլի տակից Սեդրակ Մանդինեանի հետևեալ աշխատութիւնը. „ԿԵԱՆՔԻ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏ ԹՈՒԱԲԱՆՈՒԹԻՒՆ“. *Ծիածական դպրոցների Զորրորդ տարուայ դասընթացք և միանգամայն Ա. Բ. և Գ. տարիների համար հրահանգ։ Վաճառվում է բացառապէս „Կենտրօնական գրախանութում“ գինն է 75 կոպէկ։*

Дозволено цензурою, Тифлисъ 18 Декабря 1881 года.
Типографія Главнаго Управленія Намѣстника Кавказскаго.